Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
նոյեմբերի 22-ի նիստի N 47
արձանագրային որոշման

Հայաստանում արտահանման ֆինանսավորման ապահովագրական կազմակերպության ստեղծման միջոցառումների ցանկ

No:	Աշխատանքներ	Մեկնարկի ամսաթիվ /պահանջվող ժամկետ	Վերջնաժամկետ	Պատասխանատու պետական մարմին	Մեկնաբանություններ
1	ԱՖԱԿ-ի համակարգման խորհրդի ստեղծման մասին որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարություն		Դեկտեմբերի 31	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն	Տեղեկանք-հիմնավորում ԱՖԱԿ-ի ստեղծման վերաբերյալ
2	ԱՖԱԿ-ի ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	Հունվարի 1/ 4 շաբաթ	Փետրվարի 10	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն	Տեղեկանք-հիմնավորում ԱՖԱԿ-ի ստեղծման վերաբերյալ
3	ԱՖԱԿ-ի ապագա կազմակերպական կառուցվածքի մասին որոշում և նախապատրաստող թիմի հավաքագրում մինչև ընկերության ստեղծումը, աշխատանքների ֆինանսավորման առաջարկների ներկայացում		Փետրվարի 10	Հիմնադիրներ, համակարգող, նախապատրաստող թիմ/ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ԿԲ	7-10 անձից բաղկացած թիմ, ցանկալի է, որ այն հետագայում ընդգրկվի գործադիր մարմնի կազմում:[1]

[1] Նախապատրաստող թիմի կազմում, բացի (1) թիմի ղեկավարից (ապագա գործադիր տնօրենից), պետք է ընդգրկվեն նաև հետևյալ ոլորտների համար պատասխանատու անձինք՝ (2) ապահովագրության մարկետինգ և վաճառք, (3) ռիսկերի ապահովագրություն, (4) ֆինանսական կառավարում/հաշվապահական հաշվառում/ֆինանսական պորտֆելի կառավարում/տարածքի վարչական կառավարում և այլն, (5) հիմնադիր փաստաթղթերի, ապրանքների, ապահովագրական պայմանագրերի իրավական հարցեր և այլն (6) SS ապահովում և կառավարում, (7) ապահովագրական կորուստների/հայցերի և փոխհատուցման ընթացակարգեր, (8) ՄՌ կառավարում/աշխատակազմի համալրում և վերապատրաստում:

4	Արտահանման ոլորտի պետական աջակցության մասին օրենսդրական փաթեթի նախապատրաստում	Հունվարի 1 / 6 ամիս	Հուլիսի 1	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, կառավարության իրավական հարցերով խորհուրդ, միջազգային փորձագետ	Հնարավորության դեպքում օրենքը կհաստատվի ՀՀ կառավարության և Ազգային Ժողովի կողմից արագացված ընթացակարգով՝ գործունեության մեկնարկի ամսաթվի երկարաձգումը կանխելու նպատակով:
5	Նոր ստեղծվող ԱՖԱԿ կանոնադրական կապիտալի համարժեք գումարի ապահովում պետական բյուջեից		Մարտի 31	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14 հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է կանոնադրական կապիտալի ամբողջ գումարի վճարում՝ ընկերության գրանցման պահին:
6	Ընկերության կանոնադրության մշակման, ինչպես նաև գրանցման և ապահովագրական գործունեության լիցենզիա ստանալու համար «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40 հոդվածի 1-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ՀՀ ԿԲ ներկայացնելու նախապատրաստական աշխատանքներ և ապագա աշխատակազմի հավաքագրում, փաստաթղթերի ներկայացում ՀՀ ԿԲ-ին, գրանցման և լիցենզիայի ստացում	Փետրվարի 1	Հունիսի 15	Համակարգման խորհուրդ/ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ՀՀ ֆինանսների նախարարություն/ՀՀ ԿԲ	Աշխատակազմի սկզբնական կազմի անդամները պետք է ի վիճակի լինեն մասնակցելու ներքին կանոնների և կանոնակարգերի մշակման աշխատանքներում, հետագայում համալրելով միջին օղակի ղեկավարների կազմը: Ներկայացված բոլոր փաստաթղթերը ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխանելու դեպքում, ՀՀ ԿԲ-ն 30-օրյա ժամկետում պետք է կայացնի գրանցման/լիցենզիա տրամադրելու մասին համապատասխան որոշում:
7	Ներքին կանոնների և ընթացակարգերի մշակում և դեպի բանկերն ու արտահանողները կողմնորոշված մարքեթինգային արշավի կազմակերպում	Մայիսի 15/ 3 ամիս	Օգոստոսի 15/ Շարունակական	Համակարգման խորհուրդ/ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ՀՀ ֆինանսների նախարարություն/ՀՀ	Անհրաժեշտ է համակարգել ապահովագրական ապրանքների մշակման աշխատանքները: Մարկետինգային և բացատրական արշավը պետք է լինի լայնամասշտաբ՝ օգտագործելով պետական

				ԿԲ, խորհրդատուներ, նոր աշխատակազմ, Ղեկավարություն, մարկետինգի թիմ, ՀԶԳ, բանկեր	հաստատությունների, բանկերի և շահագրգիռ այլ կողմերի ներուժը::
8	Ղեկավարության և աշխատակազմի վերապատրաստում/ուսուցում	Մայիսի 15 / 6 շաբաթ	Հուլիսի 30	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ՀՀ ֆինանսների նախարարություն/ՀՀ ԿԲ	Այս աշխատանքները պետք է համակարգվեն ապրանքների նախապատրաստման և ընթացակարգերի մշակման աշխատանքների հետ, վերապատրաստման/ուսուցողական դասընթացը կարող է շարունակվել գործունեության մեկնարկից հետո:
9	Միջազգային մարմինների հետ կապերի հաստատում՝ Պրահայի Ակումբ և Բեռնի Միություն + արտերկրյա ընտրված գործընկեր հաստատություններ		Սեպտեմբերի 30	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ՀՀ ֆինանսների նախարարություն/ՀՀ ԿԲ, խորհրդատու	ԱՖԱԿ-ի ներկայացուցիչները կարող են հրավիրվել Պրահայի Ակումբի հաջորդ գարնանային հանդիպմանը (որը սովորաբար տեղի է ունենում մայիսին):
10	Միջազգային փորձագետների հրավիրում և հնարավոր դոնոր կազմակերպությունների հետ բանակցությունների վարում ֆինանսավորման նպատակով		Հոկտեմբերի 30/ շարունակական	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ՀՀ ֆինանսների նախարարություն/ՀՀ ԿԲ, ԱՖԱԿ	

Ծանոթություն՝ միջոցառումների ցանկը հիմնվում է սույն փաստաթղթում նախատեսված բոլոր քայլերի/գործողությունների անխափան կատարման և իրականացման լավատեսական կանխատեսման վրա: Ուստի, սահմանված վերջնաժամկետները պետք է ընդունվեն որպես պայմանական, քանի որ օրակարգի որոշ հարցերի հետ կապված աշխատանքները կախված կլինեն նախորդ հարցերի ավարտի ժամկետներից: